

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Վեհափառ Հայրապետի հեռագիրը ուղղուած սոյն ճոկտեմբերի 5-ին Տփխիս.

Նորին Պայծառափայլութեան Կովկասի Տ. Փոխարքայ Վորոնցով–Դաշկովին.

Ի սրտէ ուրախ լինելով Ձեր Պայծառափայլութեան կատարեալ առողջութեան համար՝ ողջունում եմ Ձեր գալուստը՝ Ձեզ սիրող Կովկասեան երկիրը։ Մաղթում եմ առ Բարձրեալն պարգևել Ձեզ և Նորին Պայծառափայլութեան Բարեպաշտուհի՝ Ձեր ամուսին Կոմսուհի Ելիսաւետա Անդրէեվնային և Ձեր բոլոր ընտանիքին՝ երջանկութիւն և երկարակեցութիւն։

Մատթէոս Կաթուղիկոս Ամենայն Հայոց

Նոյն օրն ստացուեց Նորին Պայծառափայլութիւն Տ. Փոխարքայից հետևեալ հեռագիրը.

Նորին Սրբութիւն Կաթուղիկոսին ամենայն Հայոց

Ամուսինս և ես ի սրտէ շնորհակալ ենք Ձերդ Սրբութեան շնորհաւորութեան առթիւ. ցանկանում ենք բարի առողջութիւն և յանձնում ենք Մեզ Ձեր սուրբ աղօթքներին։

Վորոնցով